




ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԸ*

ԱՐՑԱԽԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ. ԽԱԴԱՅԻ ՎԱՆՔ

Վաղարշապատի առաջին հայագիր դպրոցից հետո, Հայաստանի բոլոր գավառներում բացվեցին նույնատիպ դպրոցներ, որոնք միաժամանակ գրչության կենտրոններ էին: Ավելի խոշոր գրչության կենտրոններն ու դպրոցներն ունեին նաև մատենադարաններ, որոնք ծառայում էին դպրոցին և միաժամանակ պահպանում ձեռագրերը հաջորդ սերունդների համար: «Եթե դպրոցը մարդկային մտածողության գորանոցն է, ապա մատենադարանը՝ նրա գինարանն է»—ասում էին միջնադարում: Եթե մեր նախնիներից ստացած ամենամեծ ժառանգության համար պարտական ենք մեր գրչության կենտրոններին, ապա նրանց փրկության և մեր օրերը հասցնելու համար՝ մատենադարաններին՝ տերունական, վանական թե անձնական:

Վաղարշապատից հետո նշանավոր էին Սևանի, Բագրևանդի, Արշակունյաց, Մաքենոցաց, Տաթևի, Արգիճաշի, Անիի և այլ դպրոցները, գրչության կենտրոններն ու մատենադարանները, ուր մշակվում, կատարելագործվում էր հայ գրչության արվեստը, ստեղծվում մատենագրությունը:

Այդպիսի մի հզոր մշակութային կենտրոն էր Արցախի Խաղայի վանքը՝ իր նշանավոր դպրոցով, գրչության կենտրոնով, մանավանդ մատենադարանով, որի շահած-պահած ձեռագրերը այսօր Հայ ժողովրդի հոգևոր գանձարանի թանկագին գոհարներն են:

Խաղավանքը (Խաղի վանք, Խաղայի վանք, Խաղարի վանք, Խաթրավանք) գտնվում է Վաղուհաս գյուղից 5—6 կմ արևմուտք, Թարթատ գետի աջ ափին, անտառածածկ մի լեռնաբազուկի վրա (այժմ Լեռնային Ղարաբաղի հանրապետության Մարտակերտի շրջան): Կառուցվել է հանուն հայոց մեջ քրիստոնեություն տարածող Թադևոս առաքյալի յոթանասուն աշակերտներից

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1992 թվականի Թ—Ժ—ԺԱ միացյալ համարից::

մեկի՝ Խադի: Վանքը սկզբից անտի եղել է Արցախի Մեծ Կողմանք կամ Մեծ-Կվենք գավառի առաջնորդարան³²:

Խադավանքը 12-րդ դարում հիշվում է որպես Վերին Խաչենի կամ Ծարի իշխանության հոգևոր կենտրոն: 13-րդ դարի առաջին կեսում, երբ Վախտանգ հզոր իշխանի մահից հետո Հաթերքի իշխանության տարածքը բաժանվեց ներքին խաչենցիների և ծարեցիների միջև, Հաթերքի առաքելադիր հոչակավոր Դադի վանքը դարձավ Ծարի իշխանության հոգևոր կենտրոնը և տոհմական տապանատուն, որը չխանգարեց, սակայն, Խադավանքի եպիսկոպոսանիստ և գլխավոր տոհմական տապանատուն մնալուն³³:

Խադավանքի վանական համալիրը՝ կաթողիկեով, կից եկեղեցիներով, մատուցներով ու բազմաթիվ օժանդակ շինություններով սաստիկ տուժել է 1139 թ. երկրաշարժից: Մի քանի տարի անց, սելջուկ թուրքերը հիմնահատակ կործանել են խաչենցիների հոգևոր կենտրոնները և սրբությունները գերեվարել: Մինչ այդ էլ Մովսես Կաղանկատվացին ողբում էր անօրենների բարբարոսություններից կործանված երկրի համար. «հրկեզ եղեալ յանօրինաց՝ կտակարանք և սպասք, և տեղիք կալոյ նոցա»:

Խադավանքի հետագա ծաղկումը կապվում է իշխանական պայազատներից Հովհաննես վարդապետ Խաչենցու հետ: Հայրենի գավառում հոգևոր ծառայությունից հետո, ստանձնում է Սարգիս Զաքարյան սպասավորի Զաքարե և Իվանե որդիների դաստիարակությունը: 1170—80-ական թվականներին Սանահինի, 1180-ականներին՝ Հաղբատի վանքերի առաջնորդն է, հայտնի շինարարական իր գոծությունությամբ, իսկ 1195—1205 թ. վարդապետը կրկին Խաչենումն էր և վերականգնում է Խադավանքը:

Խադավանքում, ուր և տաճար կար և այլ շինություններ, Հովհաննես վարդապետը կառուցում է մի եկեղեցի, հատուկ նպատակով. այնտեղ պետք է հավաքվեին վանքում եղած բոլոր գրքերն ու սպասքը: Այդպես էլ անում է, և 1204 թվականին ավարտում է ձեռագրերի և սպասքի համար նախատեսված շենքը, և թանկագին գանձերը հավաքում նրա մեջ:

«Ի ՈԾԳ (1204) թուիս, ես տէր Յոհանէս շինեցի զեկեղեցիս եւ ժողովեցի զխաչ եւ զգիրք որ ի սմա, եւ արկի զԶոթացն այգին եւ զմատաղիսն՝ բազում աշխատութեամբ: Եւ ետու զվանքս իւր ամէն սահմանաւ իմ աւագ աղբարս Հասանա եւ իւր որդեացն՝ Հաթերքո տեառնն միջնորդութեամբ:

Ով խափանէ, խափանեցի ի կենացն Աստուծոյ»:

Ապա նույն տողից շարունակվում է արձանագրությունը նույն գրով, բայց արդեն Հովհաննեսի ավագ եղբայր Հասանի անունից. «Յանուն Աստուծոյ այս իմ գիր է Հասանայ. որ երբ իմ աղբէրս զեկեղեցիս շինեաց ու զվանքս ինձ երես, ես զԽնձորոբակս իւր սահմանովն ի եկեղեցիս տուի:

Ով հակառ(ա)կա՝ Աստուծոյ է հակառակ:

Ով զայս գիրս խափանէ, չունի թողութիւն յԱստուծոյ»³⁴:

Սակայն դրանով գործը չի վերջանում: Նա նոր շինությանն է նվիրում Զոթանց այգին և բազում աշխատությամբ հիմնած նորատունկները: Ուրեմն

³² Բ. Ուլուբաբյան, Մ. Հասրաթյան, Խադավանք-Խաթրավանք, «Հայկազեան հայագիտական հանդես». հ. Ժ. Բեյրութ. 1982—1984. էջ 24:

³³ Բ. Ուլուբաբյան, Մ. Հասրաթյան, Խադավանք-Խաթրավանք, էջ 21:

³⁴ Սույն վիմագիր արձանագրությունը ցուցադրվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, որից կատարել ենք վերծանությունը:

այս եկեղեցի-շինությունը՝ հաստատություն է: Այնտեղ ձեռագրերը ոչ թե պետք է միայն հավաքվեն, այլև բազմանան. այսինքն՝ այն մատենադարան է և գրչության կենտրոն, այլև դպրոց, ինչպես կոտեսենք այնտեղ հավաքված ձեռագրերից, իսկ նրանց հիշատակարաններից կիմանանք դպրոցի, ուսուցիչների և աշակերտների մասին: Նորաշեն եկեղեցին Հովհաննես վարդապետի հոգածության առարկան էր:

Ավարտից հետո նա ամբողջ վանքը իր ամեն սահմանով նվիրում է իր ավագ եղբորը՝ Հասանին: Վերջինս ընդունելով մեծագույն նվերը, նորաշեն եկեղեցուն է նվիրում Խնձորաբակը՝ յուր սահմանովը: Նշանակում է, նորաշեն եկեղեցին իսկապես ուսումնական կենտրոն է, որի գոյատևման և ծաղկման համար բազում աշխատություն է հարկավոր՝ սեփական գյուղերով և այգիներով:

Ուրեմն սույն արձանագրությունը Խաղայի վանքի դպրոցի, գրչության կենտրոնի, մատենադարանի հիմնադրման վավերագիրն է, որն հաստատվում է նաև նրա փառավոր գործունեությամբ, անունները մեզ անհայտ վարդապետների, գրիչների, ծաղկողների, արծաթագործ ու ոսկերիչ հմուտ վարպետների ջանքերի շնորհիվ մեզ հասած սակավաթիվ արդյունքներով, որոնք հիմա թանկագին մատունքներ են, թեկուզ հիշատակարաններում պահպանված վկայությունների ձևով: Այս հաստատվում է նաև ճարտարապետական հորինվածքների համաքննությամբ:

Խաղավանքի համալիրի առանձին հուշարձանների ուսումնասիրությունը մասնագետներին բերել է այն եզրակացության, որ նրանցից մեկը իր ճարտարապետությամբ համապատասխանում է միաժամանակ և՛ գրչության կենտրոնի, և՛ մատենադարանի, ինչպես նաև դպրոցի, որի մեծ քանակուսի դահլիճը մեծ երդիկով ծառայել է ուսումնական պարապմունքների և գրչությամբ զբաղվելու համար, այսինքն դպրատուն և գրչատուն, իսկ խոշոր որմնախորշերով հաջորդ դահլիճը՝ ձեռագրատուն-մատենադարան, նրման Սանահնի, Հաղբատի, Գոշավանքի, Սաղմոսավանքի, Հոռոմոսի, Դադիվանքի գրատներին³⁵: Թե ինչպիսի և քանի ձեռագիր է ժողովել Հովհաննես վարդապետը իր նորակառույց մատենադարանում, անհայտ է, բայց հայտնի է դպրոցի շրջանավարտներից մեկի նվերը դպրոցին ու մատենադարանին, որը հասել է մեզ և պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում (№ 6288):

Սարգիս քահանան ավարտում է Մեծ կողմանց եպիսկոպոսարան Խաղայի վանքի դպրոցը, 13-րդ դարի սկզբում, ձեռնադրվում քահանա, և ի պատիվ «իւր սննդեան տեղի» որոշում է ձեռագիր նվիրել դպրոցին: Անի քաղաքում, որ հռչակված էր նաև շքեղ ձեռագրերի պատրաստմամբ ու վաճառքով, գնում է «ի հալալ ընչից իւրոց իր ցանկալի» «մեծայծախ, ոսկեգիր և ոսկեճանճանչ ծաղկաւք զարդարեալ... կենսալքեր Ավետարանս» և ընծայում Մեծկողմանց եպիսկոպոսարանի Սուրբ Գրիգոր եկեղեցուն «որ է իւր տեղի սնդեան», ուր «սնեալ սրբութեամբ ի մէջ եկեղեցոյ, և զարգացեալ ի մէջ իմաստուն և հոգևոր արանց»: Նվիրատվությունը տեղի է ունենում 1223 թ. «ի յիշխանութեան հզարի Հասանայ որդոյ Վախտանգա, եւ ի հայրապետութեանս տեառն Յոհաննեսի»³⁶:

³⁵ Բ. Ուլուքաբյան, Մ. Հասարթյան, նշվ. աշխ., էջ 48—49:

³⁶ Մատենադարան ձ. № 6288 էջ 358բ—359ա: Հմմտ. Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ. դար, Երևան 1984 թ. էջ 134: Ձեռագիրը գրվել է 1211 թ. Հաղբատում, տեղի դպրոցի սան, Անի քաղաքացի Սահակի պատվերով, Հակոբ գրչի

Այստեղից պարզվում է, որ Մեծ Կողմանց եպիսկոպոսարան Խաղա-վանքը քահանայական դպրոց է ունեցել, որտեղ աշակերտները դաստիարակվում էին իմաստուն և կատարյալ ուսուցիչների ձեռքի տակ, և ավարտում լցված դպրոցի և դասատուների նկատմամբ երախտագիտությամբ ու այն գիտակցությամբ, թե «սիրոյ զարութիւն գերազանց է քան զբնութիւն», որն էլ իր հերթին խոսում է ուսման դաստիարակիչ ազդեցության մասին:

Հիշատակարանի շարադրանքը և գիրը, ձեռագրում բացակա ավետարանիչների նկարների կատարումն ու հավելումը, ձեռագրի վերստին կազմումը վկայություն են գրչության արվեստի բարձր մակարդակի, որ կար Խաղավանքում՝ 13-րդ դարի սկզբներին:

Թե Սարգիս քահանայի նման քանի շրջանավարտ է տվել Խաղայի վանքի դպրոցը, և քանի ձեռագիր է մոծվել մատենադարանում հաջորդ քսանամյակում, տեղեկություն չունենք: Միայն հայտնի է, որ 1244 թ. Խաղայի ձեռագրատան հավաքածուն միանգամից հարստանում է մի քանի, այժմ առավել թանկագին ձեռագրերով, որոնցից մեկի մեջ պահպանվել է այդ մասին հետևյալ տեղեկությունը. «Բարկութիւն Աստուծոյ եհաս մէզ եւ ծնողաց մերոց եւ քրիստոնէից իւն ազգէս նետողաց արեւելից, որ տատար կոչին և զարծաթն սիրեն»:

Կործանելով պարսից թագավորությունը, սրանք մտնում են «յաշխարհս Հայոց և Աղուանից և առավել զանթի գավառս եւ զքաղաքս եւ զվանորայս, ի սուր սուսերի մատնեցին զազգն քրիստոնէից՝ զիշխանս մեծամեծս և զոսմիկ ժողովրդականս... տապալեալ և քանդեալ զեկեղեցիսս և ըսպասս սրբութեան և զնշանս տէրունական յաւար առեալ յանաւրիմացն ի գերութեան վարեալ առհասարակ»:

Հասանի և Դոփի որդի Գրիգոր իշխանը, որը իր հեծելազորով հարկադրաբար մասնակցում էր մոնղոլների Բաշու նոյինի արշավանքին, շարունակում է պատմել, որ նվաճողները ասպատակում էին քաղաք, գյուղ ու վանք և «սրոյ ճարակ տային զամենեսին եւ մեր կական բարձեալ դողայաք տագնապէն զկործանմանն այնմ» և տանջվում են, որ չեն կարողանում օգնել քրիստոնյաներին «քանզի ընդ նոցին տէրութեամբ էաք»: Իսկ թշնամին սպանում ու թալանում էր ամեն ինչ: Խաչենի իշխանին մնում էր թալանչիներից գնելով փրկել սրբությունները «...և զտառս աստուածային ոչ ձեռաւք մերաւք առեալ յաւարի այլ գնեալ ի նոցանէ, բերաք ի սեփական տերութեանս մեր՝ զծաղկալից բուրաստան զԱւագ Տաւնականն եւ զմիւս այլ Տաւնական, զԺողովոց Յոհանն եւ զԱւետարանն, եւ զաջն սրբոյն Ստեփաննոսի, զոր ի քաղաքէն կանու բերաք եւ տուաք ի բնիկ հայրենական սուրբ ուխտս մեր Խաղայի վանիցս:

ձեռքով: Նկարագարդել է մասամբ՝ Մարգարե ծաղկողը Անիում, կազմել Աբրահամը՝ Հոռոմոսում: Ձեռագիրը Սահակը նվիրել է Արջուտոնի վանքում իրենց կառուցած եկեղեցուն: Ձեռագիրը ինչքան է մնում Խաղայի վանքում, հայտնի չէ: Տարվում է Գետաշեն, այնտեղից էլ Գ. Հովսեփյանը բերում է Էջմիածնի Մատենադարան:

Հնարավոր է նաև, որ Հաթեքի իշխան Վախթանգը իր տիկնոջ կառուցած (1212 թ.) եկեղեցուն նվիրելու համար Ավետարանը պատվիրել է Անիում, որի խորանի սյուները նույնպես զբաղեցված են արձանագրությամբ, իսկ Գանձասարի Գրիգոր և Վարդան քահանա եղբայրների ձեռք բերած Ավետարանը, անշուշտ Անիի շրջանից է գնված: Բանն այն է, որ ձեռագրի խորանները նկարագարդել և սյուների վրա ինչպես իրենց, այնպես էլ ստացողների մասին հիշատակագրություններ են թողել Իգնատիոս Հոռոմոսցի նկարիչը և նրա աշակերտ Հովսեփը՝ (Ս. Մաթևոսյան, ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 94—95 և 199—200):

Իսկ ի միասում ամի այլ եւս գնալով ընդ նոսա, հասար մինչև ի մայրաքաղաքն Կեսարիայ Կապադկացոց նահանգին, եւ անտի առեալ զԱւետարանս պարոնն իմ Աւագն, եւ ետ ինձ: Եւ իմ խնդալից եղեալ եւ բերկրեալ սրտիւ, զի ետ ինձ Տէր զիր զաւետաբեր քարոզն, եւ բերել ետու ի նախասացեալ սուրբ ուխտս: ...Եւ այս գործեցաւ ի թուականութեանն Հայոց ՈՂԳ (1244)»:

Ուրեմն նախորդ չորս ձեռագրերը, որ փրկվել են առաջին արշավանքի ժամանակ, Խաղայի ուխտի մատենադարան են մուծվել 1243 թվականին:

Պարոն Ավագի Գրիգորին նվիրած Աւետարանը, որի վերջում գրված է սույն հիշատակարանը, պահվում է Մատենադարանում 7347 համարի տակ: Նրա մեջ գրված նշված հիշատակարանն ավարտվում է այսպես. «Արդ, որք առթիք, ընթեռնոյք և աւգտիք յաստուածաշունչ տառիցս եւ ի սուրբ վարդապետութենէս կենարարի մերոյ, յիշեցէք առաջի զեմմանն Քրիստոսի զիս՝ զԳրիգոր, եւ զԱմուսին իմ զՄամբան, եւ զհարազատ որդիքս իմ զՀասան, զՍեւադա եւ զՅոհաննէս, եւ որք յիշէք, յիշեալ լիջիք ի Քրիստոսէ»³⁷:

Մյուս ձեռագիրը «Ժողովոց Յոհանն» պետք է հասկանալ Հովհան Իմաստասեր Օձնեցու «Սակս ժողովոց որ եղեն ի Հայս» աշխատությունը: Ծակատագիրն անհայտ է: Երկու տոմսական ժողովածուներից առաջինն անվանված է «Աւագ Տոմսական»: Տոմսականի այսպիսի անվանում մեզ այլուստ հայտնի չէ: Կան Մաշտոց, Մայր Մաշտոց, Ժամագիրք, Ատենի Ժամագիրք, Աւետարան, Մանկության Ավետարան, Ծարական, Զայնքաղ շարական և այլն: Տոմսականի «Ավագ» անվանումը վերաբերում է սույն ձեռագրի մյուսի նկատմամբ ունեցած մեծությանը, բովանդակության հարստությանն ու թվականին, ինչպես որ է: Բանն այն է, որ Երզնկայի Ավագ վանքը հռչակված էր Տոմսականների ընդօրինակությամբ, մասնագիտացված էր այդ բարդ գործի մեջ: Գրիգոր իշխանը 1244 թ. իր ձեռք բերած Տոմսականներն իրարից տարբերելու համար կարող էր նրանցից մեկը կոչել «ավագ» որպես մյուսից մեծ: Կարնո երկրից (որի մեջ էր նաև Սեպուհ լեռան Ավագ վանքը), երկու Տոմսական է բերվել Խաղայի վանք: 1227 թվականին Ավագ վանքում երկու Տոմսական է ավարտվում: Առաջինը Ներսես գրիչը գրում է Վարդան վարդապետի համար: Այն այժմ ունի 50×33 սմ մեծության 612 թերթ: Նույն թվականին և նույն տեղում, նույն Ներսեսը Կարապետի ընկերակցությամբ

³⁷ Մատենադարան ձ. № 7347, էջ 342ա—342բ: Հմմտ. Ա. Մաթևոսյան, ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 228—229:

Ձեռագիրը կազմված է 26,5×19 սմ մեծության մագաղաթյա 342 թերթից: Գրված և նկարագարողված է Հռոմկլայում, 1166 թ. Կոզմա գրչի ձեռքով: Միջին մեծության մարգարտաշար երկաթագրով, երկայուն գրությամբ, զարդագրերով, լուսանցազարդերով է կազմված 18 տողանոց յուրաքանչյուր էջը: Ծբեղ ավետարանառաջին նախորդում է ավետարանիչի ձեռագրիկ նկարը: Ձեռագիրն սկսվում է տասը գունազարդ աղյուսակագիր խորաններով: Սրանց և Մաթևոս ավետարանչի նկարի մեջտեղում նկարված է Քրիստոսը՝ գահավորակի վրա, որի առջև ծնկաչոք Ավետարանն է ստանում Անձտունյան գավառի Առաքալ եպիսկոպոսը:

Ձեռագրի վերջում Գրիգոր Խաչենցու վերը հիշված հիշատակարանն է:

Ձեռագրի սկզբի հիշատակարանից (այժմ՝ ցեցակեր) երևում է, որ դեռևս 1658 թ. ձեռագիրը գտնվում է Գրիգոր Լուսավորչի վանքում, որի անունով կոչվում էր, ինչպես երևում է Սարգիս քահանայի հիշատակարանից, Խաղայի 1204 թ. կառուցած եկեղեցին: 1887 թ. ձեռագիրը արդեն Ծիրակի Օրթաքիլիսա (Մալիսյան) գյուղում էր: Մատենադարան է մուծվել 1937—1940 թվականներին:

Տուրքի համար ընդօրինակում է նույն օրինակից, բայց համեմատաբար փոքր Տոնական (47×32 սմ մեծության 545 թերթ):

14-րդ դարում, առաջին կամ Ավագ տոնականը գտնվում էր Արցախի Ծինուց գյուղի Ս. Նշան եկեղեցում, ինչպես երևում է հետագա հիշատակարաններից, իսկ 1655 թվականին՝ Գողթան գավառի Վերին գետի Ս. Ստեփանոսի վանքում, որտեղ նորոգել են տալիս և հանձնում գյուղի քահանային: Մատենադարան է մուծվում 1920 թ. Խ. Դարյանի երկրորդ հավաքածուի հետ, ունի 6196 համարը: Երկրորդ տոնականը նույնպես գտնվել է Ս. Նշանում, իսկ 18-րդ դարում Սևանա կղզու մատենադարանում էր, որտեղից 1911 թ. տեղի բոլոր ձեռագրերի հետ տեղափոխվում է Էջմիածին: Այժմ ունի 3779 համարը:

Կարինից բերած Ավետարանը հայտնի Կարնո կամ Թեոդուպոլսի Ավետարանն է, որն այժմ գտնվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում, և այնտեղ է տարվել 1842—53 թվականներին, դարձյալ Ծիրակից:

14-րդ դարի սկզբին Խաղայի վանքում նշած ձեռագրերին միանում է Թարգմանչաց Ավետարանը, որտեղ ձեռագրի էջերում գրված հիշատակարանները բավականին հանգամանալից տեղեկություններ են տալիս ձեռագրի մասին: Ահա հիշատակարանները, առաջինը գրված Մաթեոսի, երկրորդը՝ Մարկոսի ավետարանի վերջում:

«Յ/ամե/նառատ պարգևացն Աստուծոյ, որ միշտ ներգործէ յարարածս զբարիս քաղցրութեան կամացն իւրոց:

Արդ, որպէս յամենայն դարու, նոյնպէս և ի մերս նուաղեալ ժամանակիս, յարոյց զքրիստոսաւեր և զփառաւոր պարոնն, զաւրհնեալն ի կանայս զԱս/փայն/³⁸, դուստր Տարսաինին տեառն Սիւնեաց, յազգէ Ուրպելանց, որ էր ամուսին մեծ և փառաւոր իշխանաց իշխանին պարոն Գ/րիգոր/ի: Սա ամենայն բարեպաշտութեամբ զարդարեալ, զարդարեաց զանազան սպասիք և շինուածիք զեկեղեցիս Հայաստանեաց, ստացալ և զսուրբ Աւետարանս յարդար ընչից իւրոց, և ընծայեաց ի սուրբ ուխտն իւր Խաղարիվանս, որ է գերեզմանատուն մեծ իշխանացն ազգին Դովանց. և ինքն կարճաւրեալ կենալ փոխի մահուամբ յաշխարհէս առ Քրիստոս, և դնի ի դանքանի ի նոյն վերասացեալ սուրբ ուխտն:

Իսկ ըստ մարմնոյ գլուխ նորին և այր, մեծ իշխանն Գրիգոր զարդարեալ պննէ զսա ոսկով և արծաթով, ի յիշատակ հոգւոյ սուրբ ամուսնոյն իւրոյ Ասփային, և երկարութիւն կենաց իւր և քրիստոսընծայ զաւակաց իւրոց, որոց յիշատակ նոցա եղիցի արհնութեամբ»³⁹:

«Ի ժամանակս և ի դարս ատուրց տիեզերակալութեան բոլոր աշխարհաց ազգին նետողաց, որ տիրէ ի ծովէն Պոնտոսի մինչև ի ծովն Կազբից, և յԵփրատ գետոյ մինչև յայնկոյս լեռանցն Կովկասու, որոց գլուխ և ինքնակալ խանն աշխարհակալ Խարպանդա կոչեցեալ, ի թվին Հայոց 24Ա. (1312), յայսմ ժամանակի ծագեցաւ ոմն մեծ և երևելի տոհմային պայազատութեամբ ի ցեղէ վեհից, ի զարմէ դիցազանց, ի դասակարգէ քաջաց, ի գնդէ գովելեաց Գրիգոր մեծ իշխան Հայոց⁴⁰, տէր և պարոն **Փոքր Սիւնեաց Հանդա-**

³⁸ «Ասփայ» և «Գրիգոր» անունները գրված են ոսկով, գրերը մասամբ ոսկեթափված են:

³⁹ Մատենադարան ձ. № 2743, էջ 113 բ:

⁴⁰ «Մեծ իշխան Հայոց» բառերը և «Գրիգոր», «Ասփայ», «Սարգիս» անունները ոսկեգիր են:

բերդոյ և Ականոյ և Բարձր լեռանց ծովակին Գեղամայ՝ Սոթից մինչև ի Շաղոսայգայ, ամուսնացեալ ընդ դստեր Տարսային իշխանի, ընդ ամենաօրինեալ պարկեշտ տիկնոջն Ասփային, ծնանի ի մմանէ ուստերս և դստերս: Իսկ զմինն, որում անուն էր Սարգիս, նուիրէ Քրիստոսի ի ստընդիս հասակին, որ արժանատրութեամբ ի կոչմանէ Հոգւոյն, էանց ընդ ամենայն աստիճանս քահանայութեան, հասեալ ի պատիւ եպիսկոպոսութեանն Տանն Խաչենոյ, ընդ մարմնական տէրութեանն, զոր ունէր ի հարանց ստացեալ, ընկալաւ և զհոգևոր պետութիւնն:

Արդ, յայսմ ամի, որ էր թիւս 24 (1311), փոխեցաւ յաշխարհէս Ասփայն առ Քրիստոս և եղաւ ի շիրիմի, ի սուրբ ոխտն Խաղարի վանս, վասն որոյ և մէծ պարոն Գրիգոր նուիրէ գերեզմանի նորա ընծայս յոլով գեղորայս, այգիս և անդաստանս, և զարդարէ զսուրբ ոխտն զանազան սպասիք և անդերձիք, ընդ որս պնել շքեղացոյց և զսուրբ Աւետարանս ոսկեակար կազմածով և շնորհեաց գերեզմանի նորա և իր նախնեացն յիշատակ, որում բարձաւորք և ընթերցողք սուրբ Աւետարանիս յիշեցէք զԱսփայն ի Քրիստոս և յիշողքդ յիշեալ լիջիք ի Տեառնէ»⁴¹:

«Զմեծ եւ զամենաօրինեալ պարոնաց պարոն զԳրիգոր որդի Դաւիթին, եւ զամենագով եւ զբարեպաշտ ամուսինն իւր զպարոն Ասփայն ստացաւորք եւ զարդարիչք սուրբ Ավետարանիս յիշեսջիք ի Քրիստոս»⁴²:

Շատ կարևոր տեղեկություններ է մեզ հաղորդում Սարգիս արքեպիսկոպոսը, մանավանդ վերջին, երկաթագիր հիշատակագրությամբ: Ասփան, Սյունյաց տեր Տարսային իշխանի դուստրը և փառավոր իշխանաց իշխան Գրիգորի ամուսինը ստանում է սուրբ Ավետարանը և ընծայում իր սուրբ ոխտին՝ Խաղայի վանքին: Կարճ ժամանակ անց, 1311 թ. նա մահանում է և ամփոփվում նույն վանքում, որը Դոփյանների դամբարանն էր: Ասփան առաջին երկու հիշատակարաններում հիշվում է որպես Ավետարանի **ստացող**: Գրիգոր իշխանը նույն Ավետարանը զարդարում է արծաթյա ոսկեակար կազմով և շնորհում Ասփայի գերեզմանին՝ նրա և իր նախնյաց հիշատակ: Գրիգոր իշխանը՝ հիշվում է որպես **զարդարիչ**, քանի որ ինքն իսկապես զարդարել է տվել Ավետարանը:

Վերջին հիշատակարանում Ավետարանի **ստացող** Ասփան հիշվում է նաև որպես զարդարիչ, իսկ **զարդարիչ** Գրիգոր իշխանը՝ նաև **ստացող**: Հիշարվի, իշխանը նաև ստացող է, քանի որ նա Ավետարանի վրա ծախս է արել, ստացել է և նոր միայն զարդարել, և որպես իր սեփականությունն նշվիրել իր ամուսնու գերեզմանին:

Ստացող Ասփայի **զարդարիչ** համարվելը վարկապարագի հիշատակությունն չէ. նա ձեռագիրն ստացել և նվիրել է ոխտին զարդարելուց հետո, որի և պատճառն ուներ իշխանուհին և հնարավորությունները, ինչպես ցույց են տալիս Ավետարանի մեջ կատարված փոփոխությունները:

Ասփայի ձեռքի տակ եղած Ավագի նվիրած Հոռմկուսի 1166 թվականին գրված Ավետարանի ավետարանիչների նկարները նեոդիր էին. առանձին թերթերի վրա նկարած և ամրացրած համապատասխան տեղում: Քննությունը ցույց է տալիս, որ ավետարանիչների նկարները կատարել է առ ձեռագրի գրիչ և ծաղկող Կոզման, որը 1219 թվականին դեռ ողջ էր: Այդ թվականին Խարբերդի Բարջանջ գյուղում նա Գրիգոր Մուրղանեցու օրինակից ձեռա-

⁴¹ Նույն տեղում, էջ 183ա, բ:

⁴² Նույն տեղում, էջ 293բ: Ամբողջովին գրված է ոսկեպատ երկաթագրով:

գիր է ընդօրինակում, որի ավետարանիչները ներդիր չեն: Ուրեմն Հոռմկլայի ավետարանը գրելուց հետո հիսուն տարում նա առիթ ունեցել է լրացնելու նկարների պակասը, մանավանդ որ նույն տեղում էր ապրում (1205 թ. Խարբերդում ձեռագիր էր գրում)⁴³:

Ներդիր էին նաև Սարգիս քահանայի 1211 թ. Խաղարի վանքին նվիրած Հաղպատի կամ Գետաշենի ավետարանի ավետարանիչները, որոնք, ամենայն հավանականությամբ, հենց Խաղայի վանքում էին մոծված⁴⁴:

Ավետարանիչների և տերունական նկարներ չունեղ նաև Թարգմանչաց ավետարանը, որ ստացել էր իշխանուհի Ասիան: Նա **զարդարիչ** կոչվելու համար պետք է զարդարել տված լիներ Ավետարանի այն մասը, որը պակասում էր ձեռագրին: Եվ նա, հիրավի, նկարազարդել է տվել այն մի շատ շնորհալի նկարչի, որի գործի հետ նաև անունն է պահպանվել, ինչպես և գիրը՝ նաև նկարների վրա:

Քրիստոսասեր և փառաւոր պարոնը, «զարհնեալն ի կանալս Ասիայն... ամենայն բարեպաշտությամբ զարդարեալ, զարդարեաց զանազան սպասիւք եւ շինուածիւք զեկեղեցիս Հայաստանեաց»⁴⁵: Հիրավի. «Ամուսինը թաթարաց արշավանքների մեջ էր,—գրում է Բ. Ուլուքաբյանը,—և Ասիան նրա համար բեմի սեղան կանգնեցրեց հայրենի Խաթրավանքում՝ «նպաստելեալ քրիստոսապասկ գլխոյ իմոյ մեծափառ իշխանին Գրիգորի ի շինութիւն լուսանուէր սուրբ եկեղեցոյս»: Նույն Խաթրավանքում, դարձյալ ամուսնու բացակայությանը, Ասիան խաչքար կանգնեցրեց և կամորջ կապել տվեց Թարթառի վրա «յիշատակ հոգւոց անցելոց, ներկայի և ապագայի»⁴⁶:

1305 թ. վախճանվում է Հովհաննես առաջնորդը, Ասիայի կեսրայրի եղբայրը, որի հետ նա համագործակցում էր, և «ի ձեռն քահանայապետին մեծի տեառն Յովհաննեսի» նորոգումներ էր կատարում Խաթրավանքում, նրա իսկ կառուցած սուրբ Աստվածածնի եկեղեցում կանգնեցնելով բեմի սեղան:

Ձեռագրի ստացումը, զարդարելն ու Խաթրավանքին նվիրելը պետք է դնել 1305 թ. հետո, որից վեց տարի անց 1311 թ. «ինքն կարճաւրեա կեաւք փոխի մահումբ յաշխարհէս առ Քրիստոս և դնի ի դանքանի ինոյն վերասացեալ սուրբ ոխտն»: Իսկ ով էր Ասիա պարոնի պատվերը կատարող արվեստավորը, որ այնպես է ներդաշնակել իր նկարազարդումները ծաղկողի մանրանկարներին, որ արվեստաբանները չեն տարբերել ծաղկողին նկարչից:

ԳՐԻԳՈՐ ՆԿԱՐԻՉ

Թարգմանչաց Ավետարանի խորանները զբաղեցրած թերթերի հակառակ էջերում Յա-ից սկսած⁴⁷, գեղեցիկ գրով, նկարազարդ կողմի սյունակ-

⁴³ Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դար, էջ 53, 54, 115, 116:

⁴⁴ Ա. Մաթևոսյան, Նշմարներ Անի քաղաքի գրչության և մանրանկարչության, «Բանբեր Մատենադարանի» հ. 14, Երևան. 1984 էջ 106—134:

⁴⁵ Մատենադարան, ձ. № 2743, էջ 113բ:

⁴⁶ Բ. Ուլուքաբյան, Խաչենի իշխանութիւնը... էջ 316: Հմմտ. Ա. Բարխարյան, Դիվան հայ վիմագրության, պ. V Արցախ, Երևան 1982, էջ 129—130:

⁴⁷ Չա-ում գրված է Եվսեբիոսի թղթի շարունակությունը: Մեկնությունը զբաղեցնում է ձեռագրի Յա, 4բ, 5ա, 6բ, 7ա, 8բ, 9ա, 10բ էջերը:

ների շրջանակում գրված է Ստեփանոս Սյունեցու «Մեկնութիւն խորանաց» փոքրիկ երկը, որն անջատված, ավելի ճիշտ վերախմբագրված է հեղինակի «Համառատ մեկնութիւն չորից անտարանչաց» աշխատության սկզբից: Մեկնությունը զբաղեցնում է 3ա—7ա էջերը: Այս էջի կեսից սկսած, այնուհետև մնացած երեք էջերում ևս, շարադրված տեղեկություններ են յուրաքանչյուր ավետարանչի, ավետարանի գլուխների, վկայությունների և գլխավոր ավետարանների քանակի մասին, քանի որ նրանք մի ամբողջություն են ընկալվել:

Վերջին 10բ էջում, Հովհաննեսի մասին տեղեկություններից հետո առանձին-առանձին բերված է բոլոր ավետարանների տների, գլուխների, վկայությունների և գլխավոր ավետարանների միագումարությունը, ապա՝ գրող գրչի հիշատակագրությունը. «Տէր Աստուած ողորմեա Գրիգոր նկարչի և աշխատողաց ի սմայ»: Այս հիշատակագրությունն ընդունվել է որպես ձեռագրի ծաղկողի հիշատակագրություն, նույնացվել են Գրիգոր ծաղկողն ու Գրիգոր նկարիչը, և ամեն ինչ վերջացած են համարել:

Դեռևս մեր դարի քսանական թվականներին ձեռագրում երկու տարբեր նկարիչ էր տեսել Ե. Նիկոլսկայան⁴⁸, որի տեսակետի հետ հաշվի չեն նստել, և կորցրել են ինքնատիպ մի նկարչի գրչական և մանրանկարչական մի նշանավոր կենտրոնից, որտեղ կան նրա գոյության այլ վկայություններ ևս:

Գրիգոր ծաղկողը իրեն մասին իր մանրանկարած էջերի մանրանկարների վրա ներկով գրում է, որ ինքը «ծաղկող» է, որ «ծաղկազարդարեաց սուրբ Աւետարանս»: Այս նշանակում է, որ նա, իսկապես, ծաղկող է, և ինքն է ծաղկել տվյալ ձեռագիրը, որի գրչի հետ աշխատել է համատեղ: Գրիգոր նկարիչը իր անունը նկարի վրա չի գրել, այլ ինքնուրույն մի բնագրի վերջում, որ ամեն մեկն էլ կարող էր ընդօրինակել և վերջում գրել. «Տէր Աստուած ողորմեա գրչին...» և իր անունը, որովհետև կատարված է գրչի գործ: Եվ այդ կատարողը Գրիգոր նկարիչն է, և ոչ ձեռագրի գրիչը, ոչ էլ ծաղկողը: Գրիգոր նկարիչը ձեռագրում նկարիչ է մասնագիտությամբ և գործով, իսկ մեկնությունն արտագրելիս՝ գրիչ:

Բայց գուցե մեկնությունը գրող Գրիգոր նկարիչը ձեռագրի տերունական նկարների նկարողը չէ, որ նկարողը մի ուրիշ մեկն է: Սրա դեմ ունենք շատ որոշակի ապացույց: Բանն այն է, որ Գրիգոր նկարչի ձեռքով գրված մեկնության գրությամբ են գրված տերունական նկարների վրայի մակագրությունները, որոնք անառարկելիորեն ապացուցում են, որ երկուսն էլ միևնույն ձեռքի գործն են, այսինքն՝ մեկնության գրիչ Գրիգոր նկարիչը Թարգմանչաց Ավետարանի ներդիր նկարների, տերունական և ավետարանիչների, ինչպես նաև լուսանցանկարների և խորհրդանշանների նկարիչն է:

Բացի այս. Գրիգոր ծաղկողը, որ աշխատել է գրիչ Տիրացուի հետ ձեռագիրն ստեղծելիս, ու այնքան խնամքով ծաղկազարդել խորանները՝ հանդիպակաց էջերում, ազատ թողնելով հաջորդ հանդիպակաց էջերը, չէր աղարտի իր կատարյալ գործը՝ ազատ էջերում արագագրելով մեկնությունը և ավետարանիչների մասին տեղեկությունները, մանավանդ, երբ վերջիններս սովորաբար գրվում են յուրաքանչյուր (Մաթևոսի, Մարկոսի, Դուկասի, Հովհաննեսի) ավետարանի վերջում:

⁴⁸ Նույն տեղում, էջ 16:

Անշուշտ, հայերեն ձեռագրերում պատահում է, որ Եվսեբիոսի կանոնների հետ գրվում է նաև Սյունեցու սույն մեկնությունը: Բայց այդ արվում է պատշաճավորությամբ, նախորդի նմանությամբ խորանների մեջ, նույնպիսի զարդարվածությամբ և գրությամբ: Այլ գրությամբ ավելացնում են միայն ուրիշները, ստացողի պարտադրանքով:

Այստեղ, Թարգմանչաց Ավետարանը «յարդար ընչից իւրոց» ստանալուց հետո, իշխանուհի Ասփան հանձնարարում է Գրիգոր Ակարչին Ակարազարդելու և լրացնելու ձեռագիրը: Ավետարանիչների և տերունական էջային Ակարները մագաղաթյա առանձին թերթերի վրա, լուսանցանկարները և խորհրդանիշերը ավելացնում է համապատասխան էջերում: Նկարելուց հետո Գրիգոր Ակարիչը գրում է նաև մեկնությունը:

Գրիգոր Ակարիչը Ավետարանը Ակարազարդելիս պահպանում է Գրիգոր ծաղկողի ներկայակեր, Եվսեբիոսի և Կարպիանոսի դիմանկարչությունը, տեղ-տեղ միջամտում է նաև Գրիգոր ծաղկողի գույներին՝ իր Ակարների հետ որոշակի ներդաշնակություն ստեղծելու նպատակով: Այն հատկապես Ակատելի է իր Ակարած Ավետարանիչների և Գրիգոր ծաղկողի Ավետարանառաջների էջաբացքում, որտեղ նրանք հանդիպակաց դիրքում են: Հովհաննեսի Ավետարանառաջի գլխազարդի ստորին գերանը, որի վրա երևում է, որ գրություն է եղել, Ակարիչը խնամքով ծածկել է կապույտ գույնով, ներդաշնակելով հանդիպակաց Հովհաննես Ավետարանչի Ակարի գույներին:

Գրիգոր Ակարիչը ներդիրն ամրացնում է ձեռագիրը քանդելուց հետո: Յուրաքանչյուր Ավետարանիչի Ակար դնում է իր Ավետարանից առաջ, և, ինչպես երևում է պահպանված Ակարների դասավորությունից, Ավետարանը եզրափակում է կենտ էջում Ակարված մի թերթով՝ հայացքով նախորդ էջը:

Ավետարանիչի և սույն Ակարի միջև տեղավորված է եղել ևս երկու նրկար, որն համապատասխանում է տասներկու տերունական և չորս Ավետարանիչների Ակար ունենալու կանոնին:

Ձեռագիրը կազմելուց հետո հանձնվում է ստացողին: Իշխանուհի Ասփան Ակարազարդ Ավետարանը ընծայում է «ի սուրբ ուխտն իւր Խաղայի վանս, որ է գերեզմանատուն մեծ իշխանացն ազգին Դովհանց»: Կարճ ժամանակ անց, 1311 թվականին վախճանվում է Ասփան, և ամփոփվում նույն դամբարանում, որին նվիրել է Ավետարանը: Ամուսինը՝ մեծ պարոն Գրիգոր իշխանը, ի պատիվ ամուսնու դամբարանին է նվիրում գյուղեր, այգիներ և անդաստան, սպասք և հանդերձանք, իսկ Ավետարանը՝ պնդում է ոսկե-Ակար կազմով, և «շնորհեաց գերեզմանի նոցա»: Այս արդեն 1312 թվականն էր⁴⁹:

Մեզ արդեն ծանոթ են Խաղայի վանքում գտնվող ձեռագրերից մի քանիսը, որոնք այնտեղ են մուծվել Թարգմանչաց Ավետարանից առաջ, և ո-

⁴⁹ Գրիգոր Ակարիչն է եղել, հավանաբար, նաև ոսկեզօծ կազմի հեղինակը, քանի որ քիչ չեն այդպիսի դեպքերը, երբ գրիչը նաև Ակարում և կազմում է ձեռագիրը: Դեռևս 1066 թ. Սեբաստիայում Գրիգոր Ակոռեցի գրիչը սովորում է «զգործ ոսկո ի զարդ պատուիրանց Տեառն և ի կազմած նորին»: Այսինքն ոսկերչության մեջ հմտանալիս սովորում էին ոսկի օգտագործել և տերունական մանրանկարների մեջ և ձեռագրերի կազմերում, և թղթի ու մագաղաթի և մետաղի վրա: Գրիգոր Արցախեցին, ինչպես երևում է, նույնպես սովորել է «զգործ ոսկու», և Թարգմանչագ Ավետարանի Ակարները համոզում են, որ նա կարող էր ոսկին օգտագործել և «ի կազմած նորին»:

(Մատենադարան, ձեռ. 311 էջ 282բ. Հմմտ. Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե—ԺԲ դդ. Երևան, 1988, էջ 105):

րոնք ավելի լավ ծանոթ էին Գրիգոր Ակարչին, որը չէր կարող նրանցից չօգտվել կամ չօգտագործել իշխանուհու պատվերը կատարելիս:

Մեզ հայտնի առաջին ձեռագիրը Հաղբատի կամ Գետաշենի ավետարանն է, Սարգիս քահանայի նվերը: Մասնագետները Հաղբատի և Թարգմանչաց ավետարանների ավետարանիչների միջև մամուլություններ են տեսնում, որը մտածել է տալիս, որ նրանք միևնույն անձնավորության գործն են: Շատերին անհայտ է, որ Հաղբատի ավետարանի ավետարանառաջների Ակարների թերթերը ներդիր են, որ Ակարիչ ու Գրիչ Մարգարեն, երբ նրկարագարդում էր Ավետարանը և լրացնում բնագիրը, նա հնարավորություն ուներ ավետարանիչներին Ակարելու բնագրից առաջ եղած ազատ թերթերի վրա, ինչպես այդ արվել էր Թարգմանչաց ավետարանում, բայց չի Ակարել: Այդպես էլ կազմել ու հանձնել են Սահակ Անեցուն: Այն Խաղայի վանքի սեփականությունն էր, առանց ավետարանիչների Ակարների:

Շատ հետաքրքրական է, որ Հաղբատի ավետարանիչներին Ակարելիս, Ակարիչը պահպանել է Մարգարեի Ակարած «Ընծայական» Ակարի շրջանակի զարդաձևը: Այդ նույն զարդաձևը պահպանված է նաև Թարգմանչաց ավետարանի տերունական որոշ Ակարներում, հատկապես 184 էջի «Աարումն դժոխացն» Ակարի շրջանակում: Այս նշանակում է, որ Թարգմանչաց ավետարանի տերունական և այլ Ակարները կատարվել են Խաչենի եպիսկոպոսարան Խաղայի վանքում, որտեղ գտնվում էր Հաղբատի Ավետարանը, որ Գրիգոր Ակարիչը Խաղարավանեցի էր և նա է, ամենայն հավանականությամբ, Հաղբատի ավետարանի ավետարանիչների ներդիրների հեղինակը:

Այդ դեպքում ինչպես հաշտեցնել Թարգմանչաց և Կարինի կամ Թեոդոպոլսի ավետարանների խորհրդանիշների այդքան շատ մամուլությունը: Այստեղ տարակուսելու բան չի մնում, երբ փաստերը ցույց են տալիս, որ Կարնո Ավետարանը գտնվել է Խաղայի վանքում:

Մենք արդեն վերևում տեսանք, որ Գրիգոր մեծ իշխանը 1243 թ. արշավանքից վերադառնալիս «...գԱւետարանն և գԱջն սրբոյն Ստեփանոսի, զոր ի քաղաքէ Կարնո բերաք, եւ տուաք ի բնիկ հայրենական սուրբ ուխտս մեր Խաղայի վանիցս»⁵⁰: Որ Կարին քաղաքից բերած Ավետարանը հենց Վենետիկում գտնվող Կարնո Ավետարանն է, առաջին վկայությունը ավետարանիչների խորհրդանշանների մամուլությունն է: Կարինից ավետարան է բերվել Խաղայի վանք, իսկ այստեղից Կարին Ակարիչ չի գնացել: Գրիգոր Ակարիչ Խաչենցին նրանից օգտվել է Խաղարավանքում, քանի որ ինքը այստեղ էր աշխատում:

Հռոմկլայի ավետարանում նույնպես կան ավետարանիչների խորհրդանշաններ, բայց նրանք Թարգմանչացի ավետարանառաջների զարդարվածությանը չեն համապատասխանում: Նրան ներդաշն են Կարնո Ավետարանի ավետարանառաջները, որ գալիս է Գրիգոր Մուրղանեցու գաղափարից: Գրիգոր Ակարիչը Կարնո ավետարանից Մաթեոս ավետարանիչի խորհրդանշանը Ակարելիս, ինչպես Ակատել է Ս. Տեր-Ներսեսյանը, «բյուզանդական Loros-ի ձևը չի հասկցած և այն վերածած է գիրքի մը, որ հրեշտակը կուրծքին առջև կրոնե»⁵¹:

⁵⁰ Մատենադարան № 7347, էջ 342բ:

⁵¹ Տես աստ, էջ 14:

Եվ, ինչպես հասու ենք մեծավաստակ արվեստագետի կարծիքին, Թեոդուպուսի և Թարգմանչաց ավետարանների ծաղկողները «անկարելի է, որ նույն անձը ըլլան»⁵²: Այդ երևում է նաև գույների համեմատությունից և ուկու գործածությունից, որը Թարգմանչացում բացակայում է: Այստեղ էլ նկատելի է գույների համապատասխանեցում ծաղկողի խորանների հետ. Մաթևոս ավետարանչի նկարի գույները նման են ավետարանի խորհրդանշի գույներին: Իսկ որ Կարևո ավետարանը գտնվել է Արևելյան Հայաստանում, հաստատվում է նրանով, որ այն Արևելյան Հայաստանից է տարվել Վենետիկ⁵³:

Ավետարանիչների և տերունական նկարների համար Գրիգոր Արցախեցին գաղափար օրինակներ ուներ ոչ միայն Խաղայի վանքի հարյուրամյա մատենադարանում, այլ ուներ գրչության և գիտության այնպիսի միջավայր, ինչպիսին Գլաձորի հզոր համալսարանն էր իր հռչակավոր մանրանկարիչ արվեստաբաններով—Մոմիկով ու Թորոս Տարոնացիով, Պողոս և Տիրատուր կիլիկեցիներով, որոնց և ձեռագրերը, և թերևս իրենք Գրիգոր նկարիչ Արցախցուն անձանոթ չէին: Գլաձորում էր գտնվում Կեռան թագուհու 1283 թ. Հեթումին նվիրած Ավետարանը, որից օգտվել էր Մոմիկը, Գանձասարում՝ Իգնատիոս Հոռոմոսցու և Հովսեփի ու Աբասի նկարազարդ Ավետարանը (բերված 1237 թ.), Բեգյունց նշանավոր Ավետարանը նկարազարդված Հովհաննես Սանդղկավանեցի նշանավոր ծաղկողի ձեռքով (բերված 1273 թ.) և այլ հուշարձաններ, որոնք չէին կարող ծանոթ չլինել Գրիգոր Արցախեցուն:

* * *

Ինչ է մեզ հասել Գրիգոր նկարողի Թարգմանչաց Ավետարանի նկարազարդումներից, այսինքն՝ ավետարանիչների նկարներից, տերունական ամբողջական և լուսանցային նկարներից և խորհրդանշաններից: Մենք արդեն գիտենք, որ խորանները, ավետարանառաջները (բացի ավետարանիչների խորհրդանշաններից, որոնք բոլորն էլ ներկա են) լուսանցազարդերն ու զարդագրերը Գրիգոր ծաղկողի ստեղծագործություններն են:

Գրիգոր նկարչի գրչին է պատկանում, ինչպես ասացինք, Ստեփանոս Սյունեցու խորանների մեկնության ընդօրինակությունը, գրչի անվան հիշատակագրությամբ, որն զբաղեցնում է խորանների ազատ մնացած էջերը: Ավետարանիչների նկարներից պահպանված են.

Մաթևոս ավետարանիչը «Մաթևոս» մականությամբ: Մտախոհ նըստած է բարձր գահավորակի վրա, ձախ ձեռքը ծնոտին, աջը՝ գրիչը թանաքի մեջ թաթախելիս: Վերջինս հորիզոնական մի սրվակ է, հեմված թռչունի կտուցի և գլխի վրա: Թռչունը, ինչպես և գրակալը ամրացված է սնդուկի

⁵² Նույն տեղում:

⁵³ 1843—53 թվականներին Վենետիկի Մխիթարյան միաբան Ներսես վրդ. Սարգսյանը Ջնյունհայից դուրս գալով, ձեռագրեր որոնելով, արտագրելով ու ձեռք բերելով հասնում է մինչև Գուգարք, Այրարատ, Վասպուրական, Ատրպատական, և մաս-մաս ուղարկում Վենետիկ: Կարևո Ավետարանի մասին կարդում ենք. «Ձեռագիրս 1842—1852-ին մոտերը մտած է հավաքմանս մեջ մեր միաբան հ. Ներսես վրդ. Սարգիսյան հղած է ի Մայրավանս Ս. Ղազարու»: Վարդապետը շատ ձեռագրեր է ընդօրինակել կամ ուղարկել Վենետիկ, ինչպես երևում է ձեռագրացուցակից: (Բ. Սարգսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց ի Վենետիկ Հ. Ա. Վենետիկ. 1914 էջ 570): Ն. Սարգսյան, Տեղեկագրությունք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864թ. Նախագիտելիք):

վրա: Ավետարանիչը հագին ունի կապույտ պարեգոտ և տոգա: Նկարի շքանակը խորանառիպ է: Վերևի զարդակամարը հանգչում է խոյակներով ավարտվող զույգ սյուների վրա, սրանք էլ՝ ստորին գերանի: Կամարի տակ, ավետարանիչի երկու կողմում, կապույտ խորքի վրա սպիտակով գրված է «Մատթեոս»:

295բ Հովհաննես ավետարանիչ: Կապույտ կարմիր պարեգոտով և վարդագույն թիկնոցով կանգնած է՝ հայացքը Տիրոջ աջին: Ավետարանիչի աջ ձեռքը ուղղված է ձախ կողմում նստած Պրոխորոն աշակերտին, որը գրում է ուսուցչի թելադրանքը: Երջանակը քառակյուն է, սյուների խոյակների վրա հանգչում է սրածայր կամարը, որի տակից Հովհաննեսին է ուղղված Աստծո աջը: Սյուների շարունակության և վերին գերանի ստեղծած անկյուններում զարդանախշեր են:

Տերունական նկարներից ամբողջական ներդիր թերթերի վրա էջերի հերթականությամբ պահպանվել են հետևյալ նկարները.

15ա «**Ծնունդ**». Երջանակի վերևում կարմիր թանաքով շղագրված է «**Ծնունդ Փրկչին**»:

20ա «Մկրտություն»

114ա «Հրեշտակների հայտնությունը»

170ա «Խորհրդաւոր ընթրիք» նկարի զարդարուն շրջանակից ներքև գրված է «Վերնատունն խորհրդոյ»:

184ա «**Էջք դժոխք**»: Զարդարուն շրջանակի վերևում բոլորգրված է. «Աւարումն դժոխց»:

188բ «**Աւետում**»: Երջանակի վերևում բոլորգրված է. «Աւետիս Գարիելի առ Մարիամ»:

294ա «Աստվածամոր նինջը»—Երջանակի վերևում գրված է. «Ննջումն Ածամարն»⁵⁴:

Այս ամբողջական նկարներից բացի Գրիգոր նկարիչը ձեռագրի լուսանցքներում ևս կատարել է բնագրական հատվածների բովանդակության համապատասխան նկարներ, այնպես, որ այդ հատվածների պատմությունը կարդալուց հետո նաև աչքով տեսնեն այդ տեսարանը կամ անձնավորությանը, որպեսզի ավելի տպավորիչ լինի ընթերցումը և ավելի հմայի՝ ձեռագիրը: Եթե վերջին, այժմ պակասող թերթերում որևէ լուսանցանկար չի եղել, ուրեմն մեզ հասել են Գրիգոր Խաչենցու ձեռքով կատարված բոլոր լուսանցանկարները:

Դրանցից մի մասը համընկնում են Գրիգոր ծաղկողի լուսանցազարդերի էջերին: Այս շատ բնական է, քանի որ լուսանցազարդերը նշանավորում են գլխավոր ավետարանները, այսինքն ավետարանական այն հատվածները, որոնք վերաբերվելով Քրիստոսի կյանքի և հրաշագործությունների այս կամ այն դրվագին, ընթերցվածների նյութ են հանդիսանում և ընդունված կանոնական ամբողջական էջերից զբաղեցնող նկարներից դուրս արժանի են

⁵⁴ Անտեսելով «Ննջումն Աստուածամարն» տեսարանի վերաբերյալ Ս. Տեր-Ներսեսյանի կարծիքը, ըստ որի այն հայկական ձեռագրերի ձևավորումների շարքում հաստատուն տեղ է գրավում միայն 14-րդ դարում, Լ. Չուգասյանը հայտարարում է. «Ի դեմս Թարգմանչաց ավետարանի մանրանկարի, մենք ունենք 13 դ. հայ գրքարվեստում հիշված թեմայի առաջին և միակ պատկերումը»: Ինչպես տեսնում ենք, Ս. Տեր-Ներսեսյանի կարծիքը հիմնավոր է և մնում է ուժի մեջ: 14-րդ դարում նկարված նկարը «նինջի պատկերագրության լրիվ զարգացած ձևն է» ինչպես գտնում է Սիրարիի Տեր-Ներսեսյանը («Գրիգոր ծաղկող» էջ 79):

պատկերման: Մեզ հայտնի են Գրիգոր Խաչենցու ձեռնյալ լուսանցանկարները.

- 105բ «Պետրոսի ուրացումը»
- 131ա «Դիվահարների բժշկությունը»
- 173բ «Հուդայի դավաճանությունը»
- 202բ «Քրիստոսի փորձությունը անապատում»
- 224բ «Տեոատես կնոջ բժշկությունը»
- 247բ «Կոկված կնոջ բժշկությունը»
- 207բ «Քրիստոսն ու Զակքեոսը»
- 284ա «Պետրոսի ուրացումը»
- 304ա «Քրիստոսն ու Նիկոմեդոսը»
- 307բ «Քրիստոսի գրույցը սամարացի կնոջ հետ»
- 312 «Անդամալուծի բժշկությունը»
- 332ա «Ի ծնե կույրի բժշկությունը»
- 341ա «Ղազարոսի հարությունը»
- 384բ «Պետրոսի ուրացումը»
- 365ա «Աքաղաղ»

Ընդամենը տասնհինգ լուսանցանկար:

Այսպիսով. Գրիգոր Արցախեցի նկարչից Թարգմանչաց ավետարանում վրձնած նկարներից հասել է մեզ յոթ ամբողջական, տասնհինգ լուսանցանկին և երկու ավետարանիչների և չորս խորհրդանշանների նկարներ, ընդամենը քսանվեց:

Այս բավականին լուրջ ժառանգություն է տասնչորսերորդ դարի գրչության նշանավոր կենտրոնի նշանավոր մանրանկարչից, եթե նկատի ունենանք, որ այնտեղ ստեղծված համարյա բան չի հասել մեզ, բացի այդ շատ մանրանկարիչներ կան, որոնք մեկ կամ մի քանի մանրանկարով են ներկայանում մեզ:

Հանրահայտ է, որ Արցախում պահպանվել են շատ հնագույն ձեռագրեր, որոնք քանիցս նորոգվել, լրացվել, նկարազարդվել, կազմվել են արցախյան գրչության կենտրոններում: Ուստի ամեն մի ձեռագիր ուսումնասիրելիս պետք է բժախնդրությամբ քննել ձեռագիրը, որպեսզի մեր աշխարհի ոչ մի գրչության կենտրոնից մեզ հասած ժառանգությունը չվերագրվի մյուսին, այլ գնահատվի ըստ արժանվույն, որպես հայերեն ձեռագրական ընդհանուր մշակույթի մի ազնիվ երակ, կամ վտակ սեփական գույնով ու փալով, որոնցից ծովանում է հայերեն ձեռագրերի սրբազան ավազանը: